ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28.11.2006 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. ԱՊԱՐԱՆ << 01 >> << 06 >> 2015թ.

Երկու հազար տասնհինգ թվականի հունիսի մեկին

ՀՀ Արագածոտն մարզի Ապարանի քաղաքապետարանը, որը գործում է << Տեղական ինքնակառավարման մարմնի մասին օրենքի >> համաձայն, ի դեմս լիազորված անձ Վահան Կարապետի Միքայելյանի,հաշվառված ք.Ապարան Չարենցի փողոց տուն 10, անձնագիր AH0545742 տրված 07.03.2008թ. 023-ի կողմից, այսուհետ կողմ-1, և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, որի անունից համաձայն 30.03.2015թ. տրված N 13 լիազորագրի հանդես է գալիս քաղաքացի Սիրվարդ Սաղաթելի Արմենակյանը, հաշվառված ք.Երևան Մարգարյան 10 բն.4, անձնագիր AK 0561863, տրված 16.07.2010թ., 012 կողմից, այսուհետ կողմ-2, մյուս կողմից երկուսը միասին այսուհետ՝<<Կողմեր>>, ղեկավարվելով Ապարանի տարածքային նոտարական գրասենյակում 11.12.2006 թվականին՝ սեղանամատյանի գրանցում N 1746 կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. 2006թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 1746 ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունը. Պայմանագրի 1.3 կետում <<2500դրամ, ընդամենը 112500 դրամ 1 տարվա համար>> բառերը փոխարինել <<6000դրամ,ընդամենը 270000 դրամ 1 տարվա համար>> բառերով:

1.2 Պայմանագրի 1.2. կետում՝ <<մինչև 31.12.2011թ.>> բառերը փոխարինել << մինչև 31.12.2020 թ.>> բառերով:

1.3 Պայմանագրի մյուս դրութները մնում են անփոփոխ:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2. Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2015թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Այլ պայմաններ

3.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից: Համաձայնագիրը կնքվել է 4 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը,իսկ մեկ օրինակը պահպանվում է նոտարական գրասենյակում:

ԿՈՂՄ -1

Ապարանի **քաղաքապետարանի լիազորված անձ Քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետ՝**

ԿՈՂՄ-2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի Նախարարության զբաղվածության պետական գործակալության լիազորված անձ Ապարանի զբաղվածության տարածքային կենտրոնի առաջատար մասնագետ՝

Երկու հազար տասնհինգ թվականի հունիսի մեկին
Քաղաքացիներ՝ Սիրվարդ Սաղաթելի Արմենակյանը և Վահան Կարապետի Միքայելյանը համաձայնագիրը ստորագրեցին ,,Ապարան,, տարածքի նոտար Սիրեկան Ռաֆիկի Հովհաննիսյանիս ներկայությամբ:
Գրանցված է սեղանամատյանում 183
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ ,,Պետական տուրքի մասին,, և ,,նոտարիատի մասին,, օրենքների:

Նոտար _____